«Բիզնեսի կազմակերպում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն
«Բիզնեսի կազմակերպում» (Business Administration) կրթական ծրագիրը գործում է տևական ժամանակ և ունի ավելի քան տասը տարվա պատմություն, որի ընթացքում ձեռք է բերվել կրթական գործընթացների կազմակերպման մեծ փորձառություն: Հիմնվելով դրա վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից ձեռնարկատիրության կազմակերպման գործում և բիզնեսի արդյունավետության բարձրացման առումով հետզհետե ավելի է կարևորվում իրականացվող գործունեության վերլուծաբանության նշանակությունը (բիզնեսի կազմակերպման վերլուծաբանական մոտեցումն, ըստ որոշ տվյալների, կազմակերպությունների ընթացիկ շահույթը կարող է ավելացնել մոտ 60%-ով), 2020-2021 թթ. ուսումնական տարվանից ՀՊՏՀ-ում կներդրվի վերլուծաբանության կողմնորոշմամբ նորացված կրթական ծրագիր՝ նոր ձևաչափով և բովանդակությամբ: Այդ նորացված ծրագրի համար հիմք են ծառայել նաև կրթական գործընթացի և փորձառությունների կազմակերպման հետ կապված խորհրդատվություններն ու ձեռք բերված պայմանավորվածությունները նաև այնպիսի խոշոր գործատուների հետ, ինչպիսիք են «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ, «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊԸ, «Սիքստ» ավտովարձույթի ընկերությունը, «Բեքբոն Բրենդինգ» բրենդինգային ընկերությունը: Վերջին տասնամյակի ընթացքում վերլուծաբանական հենքով պատրաստված բիզնեսի կազմակերպման մասնագետների պահանջարկը միջազգային բուհական մասնագիտական կրթության շրջանակներում ձեռք է բերել թրենդային բնույթ: Ըստ այդմ, նախատեսվում է բիզնեսին առնչվող մագիստրոսական ուսումնառության մեջ ներգրավված սովորողներին ժամանակակից բիզնեսի զարգացմանն ուղղված կիրառական գիտելիքների և գործիքակազմի որոշակի համալիրի փոխանցում: Այս նորացված մագիստրոսական կրթական ծրագիրը նպատակ ունի պատրաստել բիզնեսի կազմակերպիչներ, ովքեր արդիական վերլուծաբանական գործիքների և տեխնոլոգիաների օգտագործման միջոցով ունակ կլինեն համարժեք արձագանքելու կազմակերպական փոփոխություններին, գնահատելու բիզնեսի տնտեսական ու սոցիալական արդյունավետությունը, ինչպես նաև աջակցելու բիզնեսի կազմակերպման և կառավարման հետ կապված կառավարչական օպտիմալ որոշումների ընդունմանը: Ծրագիրը ենթադրում է տեղական և միջազգային աշխատաշուկաների համար պատրաստել մասնագիտական ու ընդհանրական գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ունեցող կադրեր, որոնց գործունեությունը կապված է

առավելապես բիզնեսի կազմակերպական փոփոխությունների հիմնավորման հետ:
Նորացված կրթական ծրագրի նպատակն է սովորողներին առաջարկել նոր մոտեցումներ և մեթոդներ, փոխանցել մասնագիտական որոշակի ունակությունների և որակավորումների համախումբ, ինչը ցանկացած բիզնես միավորի կամ կառույցի գործունեության կազմակերպման վերլուծության միջոցով կնպաստի իրականացվող գործունեության հիմնախնդիրների բացահայտմանը և համապատասխան օպտիմալ լուծումների մշակմանն ու նկարագրությանը:

Մասնագիտության նկարագիր

Կրթական ծրագրի պատասխանատուն ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնն է:
Մագիստրոսական նորացված կրթական ծրագիրը ձևավորող հիմնական դասընթաց-ներն են՝

- Բիզնեսի որոշում և բազային շուկայի վերլուծություն, բիզնեսի կառուցման նախագծեր և մոդելներ
- Բիզնես նախագծերի կառավարում
- Նորարարական ձեռնարկատիրություն. ռազմավարություն, արդյունավետու-թյուն, ռիսկեր
- Բազմաչափ վիճակագրական վերլուծությունը բիզնեսում
- Բիզնեսի արժեքի գնահատմանն ուղղված հաշվապահական հաշվառում
- Բիզնեսի գնահատում
- Բիզնես գործընթացների կանոնակարգում
- Բիզնեսի ռազմավարական վերափոխումներ
- Բիզնես ֆինանսատնտեսագիտական վերլուծություն

Կան նաև ընդհանրական չորս դասընթացներ:
Կրթական ծրագիրը հաջողությամբ յուրացրած շրջանավարտներին շնորհվում է կառավարման մագիստրոսի որակավորում:
Ուսումնառության տևողությունը 1,5 տարի է, դասերը կանցկացվեն երեկոյան:
Ուսման տարեկան վարձը՝ 700 հազար դրամ:

Աշխատանքի հնարավորություններ

Այս ծրագիրը յուրացրած սովորողներն օժտվում են բիզնեսի և ձեռնարկատիրության ոլորտի խորացված իմացությամբ, բիզնես միավորներում կամ կառույցներում կազմակերպական և վերլուծաբանական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ ունակություններով, ինչպես նաև անորոշության պայմաններում բիզնեսի շահառուների պահանջների և բիզնեսի բնութագրական պարամետրերի համադրման միջոցով կազմակերպությունների հիմնախնդիրների բացահայտման և համապատասխան լուծումների վերաբերյալ հիմնավորված որոշումների ընդունման կարողություններով: Կրթական ծրագրի շրջանավարտները կկարողանան՝

- վերլուծել կազմակերպության բիզնես գործընթացները և բարելավել դրանք,

- մատուցել խորհրդատվություններ բիզնեսի տարբեր ոլորտներում,
- մշակել գիտագործնական փաստաթղթեր և բիզնես հաշվետվություններ,
- կազմակերպել բիզնես միավորների նյութատեխնիկական մատակարարման և թողարկված արդյունքների իրացման ծրագրերի մշակումը,
- կազմակերպել բիզնես միավորների պայմանագրային պարտավորությունների կատարման վերահսկողությունը,
- կազմակերպել բիզնեսի բազային շուկայի համալիր հետազոտությունը և այլն:

Նրանց աշխատանքային գործունեության շրջանակը ներառում է բիզնեսի տարբեր ոլորտների և սեփականության տարբեր ձևերի կազմակերպությունների կառուցվածքային ստորաբաժանումները, խորհրդատվական ընկերությունները, ֆինանսական, վարկային և ապահովագրական կազմակերպությունները, ինչպես նաև ակադեմիական և գերատեսչական հաստատությունները:

Նորացված մագիստրոսական ծրագիրը իրականացվելու է գործատուների հետ սերտ համագործակցությամբ, փորձառու պրոֆեսորադասախոսական անձնակազմի ու բիզնես ոլորտի գործող մասնագետների ներգրավմամբ և դասավանդման նորագույն մեթոդների կիրառմամբ: